



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-5-10

Թիվ 18/ *142*
„ 08 „ նոյեմբերի 2018թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք նեկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի կողմից 2018թվականի հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 8-ը
ընդունված որոշումները և կարգադրությունը:

Առդիր „ *12* „ թերթից

Համայնքի ղեկավար՝

Օրմբյան

Ռ.Մարգարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» նոյեմբերի 2018 թվականի N 58 -Ա

ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 14 ՓՈՂՈՑ ԹԻՎ 96 ՀԱՍՑԵՈՒՄ զՏՆԿՈՂ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՍԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԿԵՐԱԿԱՆՁՆԵԼՈՒ, ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՍՈՒՐԵՆԻ ԷԼՅԱԶՅԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝ Կարապետ Սուրենի Էլյազյանի գ.Արմավիր 14 փողոց թիվ 96 հասցեում գտնվող, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը:
Հաշվի առնելով, որ, հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված է նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չչափանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. և հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չչափանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- 1. Ճանաչել քաղաքացի Կարապետ Սուրենի Էլյազյանի /ծնված 02.02.1955թ./, գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 14 փողոց թիվ 96 հասցեում գտնվող 1200 քառ/մ օրինական հողամասի վրա գտնվող 1990թ-ին կառուցված՝ 60.8 քառ/մ, բնակելի տան և 3.5 քառ/մ աստիճանների նկատմամբ
- 2 Ինքնակամ կառույց ճանաչել 1990 թվ-ին կառուցված 146.5 քառ/մ բնակելի տունը և 42.4 քառ/մ բաց պատշգամբը;
- 3. Հողամասին կից 109 քառ/մ ավել զբաղեցրած հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով;
- 4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Կարապետ Սուրենի Էլյազյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.
- 5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

(Handwritten signature)
Ռ.Յ.Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԳԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» նոյեմբերի 2018 թվականի N 57 -Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին » թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Կարապետ Սուրենի Էլյազյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 04-020-017-026 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 14 փողոց թիվ 96 .
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի նոյեմբերի 09
գ. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» նոյեմբերի 2018 թվականի N 56-Ա

ՏՆԱՄԵՐԶԻ ՀԱՍՑԵԻ ԿԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ին երբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին » թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Մնացական Ռուբենի Կարդանյանին ժառանգության իրավունքով պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 04-020-036-006 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 10 փողոցի թիվ 23/ 1 հողամաս.
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում;
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի նոյեմբերի 07
գ.Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 նոյեմբերի 2018 թվականի N 55-Ա

ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ՄԱՑԱԿԱՆ ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐՂԱՆՅԱՆԻՆ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՍԵՐՈՉ ՀՈՂԱՍԱՍԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ և ՎՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝ Մնացական Ռուբենի Վարդանյանի .գյուղ Արմավիր 10 փողոց թիվ 23/1 հասցեով գտնվող, ժառանգության իրավունքով ձեռք բերված գույքի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը;

Հաշվի առնելով, որ, հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չչափանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. և հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չչափանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- 1՝ Քաղաքացի Մնացական Ռուբենի Վարդանյանի /ծնված 06.06.1952 թ./ գյուղ Արմավիր 10 փողոց թիվ 23/1 հասցեով գտնվող 600 քառ/մ տնամերձ հողամասին կից 7 քառ/մ ավել զբաղեցրած հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով;
- 2. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Մնացական Ռուբենի Վարդանյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.
- 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Սարգսյան

2018 թվականի նոյեմբերի 07
գ. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» նոյեմբերի 2018 թվականի N 54 -Ա

**ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 8 ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 35 ՀԱՑԵՌՄ ԳՏՆԿՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՋԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿՍՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱՎԱՆՁՆԵԼՈՒ, ՄՆԱՑԱԿԱՆ ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝ Մնացական Ռուբենի Վարդանյանի գ.Արմավիր 8 փողոց թիվ 35 հասցեում գտնվող, ժառանգության իրավունքով ձեռք բերված սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը:


Հաշվի առնելով, որ, հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված է նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով. և հաշվի առնելով որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

- 1. Ճանաչել քաղաքացի Մնացական Ռուբենի Վարդանյանի /ծնված .06.06.1952թ./, գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 8 փողոց թիվ 35 հասցեում գտնվող 1600 քառ/մ օրինական հողամասի վրա գտնվող 1973թ-ին կառուցված՝ 240.8 քառ/մ, բնակելի տան, 78.7 քառ/մ ծածկի , 15.5 քառ/մ թոնրատան, 21.5 քառ/մ ավտոտնակի, 7.2 քառ/մ հավաքնի, 0.5 քառ/մ պարսպի նկատմամբ,
- 2. Հողամասին կից 64 քառ/մ ավել զբաղեցրած հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով;
- 3. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝ Մնացական Ռուբենի Վարդանյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.
- 4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Մարգարյան



2018 թվականի նոյեմբերի 06
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 53-Ա

«05» նոյեմբերի 2018թվականի

ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՂԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018թվականի նոյեմբերի 2-ի N88-Ա որոշմամբ, 2018թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

- 1.Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ս. Բաբայան

Ռ.Ֆ.Մարգարյան

2018 թվականի նոյեմբերի 05
գ. Արմավիր



Հավելված
 Հայաստանի Հանրապետության
 Արմավիրի մարզի Արմավիր
 գյուղական համայնքի ղեկավարի
 2018թվականի նոյեմբերի 5-րդ N 53-Ա որոշման

Ց Ա Ն Կ

**2018թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք
 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
 Արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցություններին,
 կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով
 տրամադրվող դահլիճների**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնք

h/h	Դահլիճի, շինության անվանումը	Գտնվելու վայրը /հասցեն/	Նստատեղերի թիվը	Տրամադրելու օրերը և ժամերը	Դահլիճը, շինությունը տնօրինող	Այլ նշումներ
1.	Արմավիրի մշակույթի տուն	Գ.Արմավիր 1փ. 23շենք	350	I օր 11-15 II օր 11-16 IV օր 11-18 V օր 11-17 VII օր 11-18	Գազիկ Նավասարդյան	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 52 -Ա

«05» նոյեմբերի 2018 թվականի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՋՉՉԱԿԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆԿՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի երրորդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2018թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների վերաբերյալ համայնքի վարչական տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղը՝
 - 1). Արմավիր գյուղի մշակույթի տուն 1 փողոց 23 շենք 5քմ մակերեսով.
 - 2.Սույն որոշման օրինակներն ուղարկել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
 - 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ. Ֆ. Մարգարյան

2018թվականի նոյեմբերի 05
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 51-Ա

«05» նոյեմբերի 2018թվականի

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի հինգերորդ և 18-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018թվականի նոյեմբերի 2-ի N88-Ա որոշմամբ, 2018թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացման նպատակով ընտրական տեղամասային կենտրոններ սահմանելու համար.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1.2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին Արմավիր գյուղական համայնքի վարչական տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել՝

- 1).Արմավիր գյուղի մշակույթի տուն 1 փողոց 23 շենք
Տարածքի տիրապետող մշակույթի տան գեղմասավար՝ Նավասարդյան Գագիկ Ռազմիկի
- 2).Արմավիր գյուղի միջնակարգ դպրոց՝ 1փողոց 1 շենք
Տարածքի տիրապետող՝ դպրոցի տնօրեն Ռուզաննա Ասմարյան Սուրիկի

2.Սույն որոշման մեկական օրինակն ուղարկել լիազոր մարմին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

Ս.Ֆ.Մարգարյան



Ս.Ֆ.Մարգարյան

2018 թվականի նոյեմբերի 05
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հոկտեմբերի 2018 թվականի

N 50-Ա

**<<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐԱՊԵՍ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության
զրեմքի 46-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, եղանակային պայմաններից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ժամանակավորապես, եղանակային պայմաններից ելնելով՝ 2018թվականի նոյեմբերի
1-ից մինչև 2019թվականի մայիս ամիսը դադարեցնել Արմավիրի մարզի Արմավիր գյուղի
<<Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատանքները:
2. Գույքի պատասխանատու դնել <<Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի պահակ՝ Սոֆիկ
Շահինյանին և նրան վճարել աշխատավարձի 100տոկոսի չափով:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

2018թվականի հոկտեմբերի 31
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հոկտեմբերի 2018 թվականի

N 50-Ա

**<<ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ
ՂԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, եղանակային պայմաններից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ժամանակավորապես, եղանակային պայմաններից ելնելով՝ 2018թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2019թվականի մայիս ամիսը դադարեցնել Արմավիրի մարզի Արմավիր գյուղի <<Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատանքները:
2. Գույքի պատասխանատու ղնել <<Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի պահակ՝ Սոֆիկ Շահինյանին և նրան վճարել աշխատավարձի 100տոկոսի չափով:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

(Handwritten signature)

Ռ.Ֆ.Մարգարյան

2018թվականի հոկտեմբերի 31
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

„ 31 „ հոկտեմբերի 2018թ..

N 14-U

ՈՒԻՋԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111 հոդվածի 2-րդ կետով. և հիմք ընդունելով Ռուզաննա Սարգսյանի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1. 2018թվականի նոյեմբերի 1-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի <<Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Ռուզաննա Սարգսյանի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի <<Արմավիր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հաշվապահ՝ Քրիստինե Տեր-Հարությունյանին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ. Ֆ. Սարգսյան

2018թվականի հոկտեմբերի 31

Գ. Արմավիր